

Քննարկվեցին Ջերմուկ քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրեր

11.07.2014



2014 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանն աշխատանքային հանդիպում ունեցավ Ասիական զարգացման բանկի խորհրդատուներ Յորգ Ֆիշերի և Սամվել Բարեյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ասիական զարգացման բանկի կողմից Ջերմուկ քաղաքում իրականացվելիք ներդրումային ծրագրերի հնարավորությունները և ուղղությունները: Ասիական զարգացման բանկը ՀՀ կառավարության հետ ձեռք բերված համաձայնության շրջանակներում պատրաստակամություն է ցուցաբերել ներդրումներ կատարել Ջերմուկ քաղաքի ենթակառուցվածքների զարգացման ծրագրերում: ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից ներկայացվեցին ներդրումային գրավչություն ունեցող մի շարք նախագծեր, որոնք բխում են Շվեյցարական փորձագիտական ուսումնասիրությունների հիման վրա մշակված Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարական ծրագրից: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, այդ ծրագրերի նախնական քննարկում կազմակերպել Ջերմուկի բնակչության ակտիվ խմբերի և մասնավոր հատված ներկայացուցիչների հետ, որից հետո դրանք ներկայացնել բանկի պատասխանատուների քննարկմանը: